



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 1982
Փետրուար 14, 1995

Հոգեշնորհ
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Հովիտ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ
Տէրուն.


Սիրելի Հայր Վահան,

Ստացած ենք Փետրուար 3, 1995 թուակիր ձեր նամակը եւ ներփակեալ 500 (հինգ հարիւր) տղարի փոխգիրը յատկացուելու համար Ճափոնի երկրաշարժի հիմնադրամին:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի, Ծիսական Խորհուրդիդ եւ համայնքիդ անդամներուն՝ Ճափոնի երկրաշարժին պատճառած վնասներու բարձման ի նպաստ ցուցաբերուած հետաքրքրութեան եւ մատուցուած օժանդակութեան համար:

Կ'աղօթեն որ Տէրը Իր մշտական հովանիին ներքեւ պահէ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ համայնքի բոլոր անդամները:

Սիրոյ ողջունի


ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2001
Մարտ 14, 1995

Հոգեշնորհ
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Ֆէրմն.

Սիրելի Հայր Վահան,

Ժամանակին ստացած ենք Փետրուար 7, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ Նիւ Ծրրզիի Տիկնանց Միութիւնը այս տարի Եկեղեցւոյ մէջ պիտի սօնախմբէ «Կին Սուրբերու Օր»ը, եւ այդ առթիւ կը հրաւիրէք մեզ ներկայ գտնուելու:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ձեր հրաւերին համար, սակայն կը ցաւինք որ պիտի չկարենանք ներկայ գտնուիլ՝ տրուած ըլլալով որ այդ շրջանին քաղաքէն պիտի բացակայինք:

Այս առթիւ բարի եղէք մեր լաւագոյն մաղթանքներն ու գնահատանքը փոխանցել Նիւ Ծրրզիի Տիկնանց Միութեան եւ կազմակերպիչ մարմնին:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2021

Ապրիլ 11, 1995

Հոգեշնորհ

Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան

Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Ճէրոն.

Սիրելի Հայր Վահան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 14, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 29, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ս. Րէքս Խաչիկեան

Կլէն Աճէմեան

Պարպըրա Պօղոսեան

Արթըր Օհնիկեան

Ալէն Թոմսեան

Լիօ Մանուէլեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Տարեկան Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱՃԱԿ ԱՐԹ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2288

Մարտ 26, 1996

Հոգեշնորհ

S. Վահան Վրդ. Յովհաննէսեան

Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Ֆէրլոն

Սիրելի Հայր Վահան

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 12, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 28, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Լինտա Զաղացպանեան

Ռիչըրտ Տապակեան

Կապրիել Գաբրիէլեան

Կրեկորի Աշպահեան

Արա Հուրտաճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ տեղեկագիրներուն մէջէն կը պակսէր Ծխական Խորհուրդի տեղեկագիրը, եւ Ընտրողական Յանձնախումբի միայն մէկ անդամի ընտրութիւն կատարուած էր: Թեմական Կանոնադրութեան Յօդուած 14Բ-ը կը սահմանէ. «Ընտրել Ընտրողական Յանձնախումբ մը բաղկացած ոչ նուազ քան երեք եւ ոչ ւելի քան հինգ անդամներէ, մէկ տարուան ժամանակաշրջանի համար»: Բարի եղէք անմիջապէս ղրկել Ծխական Խորհուրդի տեղեկագիրը, եւ նոր ընտրութիւն կատարել Ընտրողական Յանձնախումբի համար՝ համաձայն Թեմական Կանոնադրութեան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաճապ Արք. Մարտիրոս

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՊԱՐՄԱՄԵԱՆ

Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2269
Փետրուար 26, 1996

Հոգեշնորհ
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Հովի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ
Ֆէրոն

Սիրելի Հայր Վահան,

Ստացած ենք Փետրուար 23, 1996 թուակիր ձեր նամակը, որով արտօնութիւն կը խնդրէք վեց ամիս (Մարտ 4—էն Օգոստոս 31, 1996) ազատ կացուցուիլ ձեր հովուական պաշտօնէն՝ ձեր տոքթորայի քննութիւններուն պատրաստուելու համար: Կը տեղեկացնէք նաեւ որ, այդ շրջանին, պիտի կատարէք Ուրբաթ երեկոներու հսկումի եւ Աւագ Ծաթթուան արարողութիւնները՝ Ծաղկազարդի Կիրակիէն մինչեւ Ս. Զատիկի Կիրակին:

Նկատի ունենալով որ ձեր ուսումնական աշխատանքները ժամանակի կը կարօտին՝ կ'արտօնենք ձեզի որ վերոյիշեալ վեց ամիսներուն ազատ կացուցուիք հովուական ձեր պաշտօնէն: Կ'ակնկալենք որ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդը անհրաժեշտ կարգադրութիւնները ընէ՝ ձեր բացակայութեան ընթացքին տեղի ունենալիք կիրակնօրեայ պաշտամունքներու եւ խորհրդակատարութիւններու կապակցութեամբ:

Ձեզի կը մաղթենք քաջատողջութիւն եւ ձեր ուսումնական ծրագիրներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐԱՄԵԱՆ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2311
Մարտ 29, 1996

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Տէր Գարեգին Առաջին
Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տէր,

Երբ Ֆլորիտա կը գտնուէիք՝ Ֆերլոն Նի Ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցոյ թեմական պատգամաւորներէն Տիար Սարգիս Սուլթանեան 50,000 (չիսուն հազար) տոլար խոստացաւ՝ Հայաստանի մէջ եկեղեցիի մը վերանորոգման ծախքերը հոգալու համար:

Վերջերս այս խոստումը յիշեցուցի Տիար Սուլթանեանի, որ պատրաստ է իր խոստումը յարգել, սակայն կը փափաքի կարգ մը մանրամասնութիւններ ունենալ եկեղեցոյ վայրին եւ կարիքներուն մասին: Ան կը խնդրէ որ, եթէ կարելի է յարմար է, վերանորոգուելիք եկեղեցին կոչուի Ս. Կարապետ՝ իր հօր անունով:

Բարի եղէք վերանորոգուելիք եկեղեցիի մասին հաղորդել կարգ մը անհրաժեշտ տեղեկութիւններ, գանձք փոխանցելու համար Տիար Սարգիս Սուլթանեանին:

Ընդունեցէք քաջատղջ, արեւշատ եւ արդիւնաւոր կեանքի իմ լաւագոյն բարեմաղթութիւնները:

Մատչելով ի համբոյր Ձերոյ Սրբութեան Ս. Աջոյն
Խոնարհաբար

Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ